ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-ԹՅՈՒՆ ՏՆՕՐԵՆ

Հարգելի Գործընկեր

ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/8 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «ՍՊԱՄԾ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և հնարավոր մասնակիցներիի միջև կնքված 1Տ1ԾՀԱՊՁԲ-11/8 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության Արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ ք.Երևան,Ծիծեռնակաբերդի խճ.8/1 հասցեով, հեռ.060-37-22-55, գնումների համկարգողԱբրահամ Մարգարյանին, մինչև 2015թ. մարտի 16-ը, ժամը 11:00-ն:

Հայտերը կբացվեն ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության Արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ ք.Երևան,Ծիծեռնակաբերդի խճ.8/1 հասցեով, 2015թ. մարտի 16- ին, ժամը 11:00-ին:

Հայտի բնօրինակը և պատճենները (2 օրինակ) ներառում են գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «Սեյսմիկ պաշտպանության Արևմտյան ծառայություն» N ՍՊԱԾ-ԾՀԱՊՁԲ-11/8-15-1 ընթացակարգի հրպվերով սահմանված կարգով:

Կից ներկայացվում է կնքվելիք պայմանագրի նախագիծը:
Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը , Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները

պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը:

Ընդորում՝

-նման փաստաթղթերի Ա/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 15 թերթ:

Հարգանքով՝

Հանձնաժողովի նախագահ՝ **Անահիտ Ջավադյան**

Նախագիծ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր
«Սեյսմիկ պաշտպանության Արևմտյան ծառայություն» N **ՍՊԱԾՇՀԱՊՁԲ**- 11/8-15-1

ք. Երևան <<_____>>
ապրիլ 2015թ.

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության Արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ, ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Ս.Մարգարյանի, որը գործում է «Սեյսմիկ պաշտպանության Արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և _____ - ն, ի դեմս ընկերության տնօրեն _____-ի (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.**Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N1 հավելվածով Տեխնիկական բնութագրով նախատեսված համակարգչային և պատճենահանմանմ սարքավորումներ և օժանդակ նյութեր, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնվում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. **Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 **Գնորդը իրավունք ունի՝**

3.1.1. Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից,

3.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3. կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2. կետով նախատեսված տույժը,

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2. **Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2. Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ

տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանգրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանգրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունները հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 **Վաճառողը իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբեության չափով.

3.3.3 Գնորդից պահանջել Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվառվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքների քանակի հաշվին.

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիրը կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4.**Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. **Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ _____(_____) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում,(եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո,ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5.**Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6.**Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրությունը չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառվում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. **Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար;

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող

Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. **Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված այլ Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. **Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետությանօրենսդրության սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով , որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի,

2)սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի:

Սույն պայմանագրում չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով,որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքի հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պամայնագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած՝ ____ թերթից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. **Կողմերի հասցեները**, **բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Գ Ն Ո Ր Դ	**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**
«Սեյսմիկ պաշտպանության Արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ ք.Երևան,Ծիծեռնակաբերդի խճ.8/1 _____ _____ (ստորագրություն) Կ.Տ	_____ _____ _____ _____ _____ (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 4
« » 20 15 թ. կնքված
N ՍՊԱԾ -ՇՀԱՊՁԲ--11/8-15 -1 պայմանագրի հավելված

ԿԱՏԱՐՈՂ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
_____
_____
_____
_____
_____
_____
գտնվելու վայրը_____
_____
<< _____
_____
_____
_____
_____

գտնվելու վայրը
<<_____

<<
<<

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N__
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «_____» 2015թ.

Պայմանագրի անվանումը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, <<Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր գնման պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» « _____» 2015թ.

Պայմանագրի համարը՝ _ _____

Պատվիրատուն, ի դեմս ՀՀ ԱԻՆ <<ՍՊԱրմԾ>> ՊՈԱԿ և Կատարողը՝ ի դեմս _____ հիմք ընդունելով, որ պայմագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ ծառայություններ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին և Գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» « _____ » 2015_թ-ից«_____» «_____» 2015_թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ ծառայութնունը

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ ժամանակացույցի/
Ընդամենը				

Վերոհիշյալ ծառայությունների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց **Ծառայությունը ընդունեց**

_____
_____

/ստորագրություն/ /ստորագրություն/

_____ _____

(Ազգանուն, անուն) (Ազգանուն, անուն)

ԿՏ

ԿՏ

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

N ՍՊԱԾ -ՇՀԱՊՁԲ--11/8-15-1 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____Հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____-ի կողմից N_____ծածկագրով
Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի_____չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի (չափաբաժինների)համար

և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
_____հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով(կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝_____:
Ընթացակարգիի մասնակցի անվանումը (անունը)

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն,ազգանունը) (Ստորագրությունը)

Կ. Տ.

‘___’ _____2015թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

N ՍՊԱԾ -ՇՀԱՊՁԲ--11/8-15-1 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ՍՊԱԾ ՇՀԱՊՁԲ--11/8-15-1 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Գնման ենթակա առարկայի անվանումը	Արժեքը*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Գնման առարկայի չափաբաժնի անվանումը N1			
2	Գնման առարկայի չափաբաժնի անվանումը N2			
. . .	. . .			

*3-րդ սյունակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն -Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

‘___’ _____2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՕԺԱՆԱԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2015 թ.									
Հ/Հ	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը (հազար դրամով)	I Եռամսյակ		II Եռամսյակ		III Եռամսյակ		IV Եռամսյակ		Ընդամենը	
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4		6	7	8	9	10	11	12	13	14
1	Սկավառակ BD-R	հատ				5				5		10	
2	Ջերմամածուկ	հատ				5				2		4	
3	Հովացուցիչ	հատ				2				2		5	
4	Կարգավորիչ	հատ				3				1		2	
5	Տեսաքարտ	հատ				1				1		2	
6	Սնուցման սարք	հատ				1				1		2	
7	Մալուխ (full)	մետր				1						300	
8	Մալուխ (FTP)305մ	հատ				300						1	
9	Մալուխ (HDMI)	հատ				1				1		3	
10	Մալուխ (HDMI ,RGB)	հատ				2						1	
11	Մալուխ (VGA)	հատ				1				1		2	
12	Մաքրող հավաքածու	հատ				1				5		10	
13	Ներքին սկավառակակիր	հատ				5						1	
ԸՆԴԱՄԵՆԸ						1							

Վ Ճ Ա Ր Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը Տարի
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր				50%						100%			100%

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր

№	*Ապրանքի անվանումը*	*Տեխնիկական բնութագիր*	Չափման միավորը.	Քանակը
1.	Սկավառակ BD-R	Verbatim BD-R SL 10 pk Spindle InkJet Printable DataLife	հատ	10
2.	Ջերմամածուկ	Aywun A1-TCX2 (ներարկիչ, 3.3g)	հատ	4
3.	Հովացուցիչ	"Gamma archer" , universal cooler, 120mm fan,hydro bearing, to 95W (TDP), black	հատ	5
4.	Կարգավորիչ	Orient S3512 (SATA-RAID, 2xSATA + 1xeSATA, PCI)	հատ	2
5.	Տեսաքարտ	ASUS GEFORCE GTX750 PHOC 1GD5	հատ	2
6.	Սնուցման սարք	Cooler master THUNDER M series 620W ATX v2.3/2.91, Single +12V Rails/ Silent 140mm FAN/ High efficiency >86%/ Active PFC PSU/ flat modular, retail packing	հատ	2
7.	Մալուխ (UTP)	Full 5e (RJ-45, UTP-5պղնձե մետաղալար Ø0.54 ± 0,01 մմ, 23-24 AWG	մետր	300
8.	Մալուխ (FTP)305մ	Մալուխ Hyperline FTP4-C5E-SOLID, պղնձե	հատ	1
9.	Մալուխ (HDMI)	Մալուխ HDMI Noname Gold Plated (15m)	հատ	3
10.	Մալուխ (HDMI ,RGB)	HDMI 19 Pin Male to 3 Male RCA Cable	հատ	1
11.	Մալուխ (VGA)	VGA 15 Pin Male to VGA 15 pin Female wire 1.5m (Երկարացման համար)	հատ	2
12.	Մաքրող հավաքածու	Էկրանը մաքրելու հեղուկ կտորով ACME CL34 TFT/LCD Screen cleaning Gel + microfiber cloth	հատ	10
13.	Ներքին սկավառակակիր	Blu RayPom, DVD-RW, SATA	հատ	1

Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և գործարանային փաթեթավորված

Գ Ն Ո Ր Դ

_____

(ստորագրություն)

Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

_____

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 7

ՇՀ ընթացակարգի N ՍՊԱԾ -ՇՀԱՊՁԲ--11/8-15-1 ծածկագրով հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան <<_____>>_ _____ 2015 թ.

<<Մասնակցի անվանումը>>-ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ <<Պատվիրատու>>) կողմից կազմակերպված՝ <<Գնման առարկայի անվանում>> ձեռքբերման ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ), պետք է ներկայացնի հայտի ապահովում և ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 <<Պատվիրատու>>-ի կողմից կազմակերպված <<Գնման առարկայի անվանում>> ձեռքբերման ծածկագրով ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և բաց ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ---------- (----------տառերով----------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 <<Պատվիրատու>>-ն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում <<Պատվիրատու>>-ին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը>> բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով ,Մասնակցի անվանումը>>-ն հանձնարարում է <<Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը>> բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Պատվիրատուի նավանումը>> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց <<Պատվիրատուի անվանումը>>-ի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>,

<<Մասնակցի հասցեն>>

<<Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը>>

հ/հ ----------

տնօրեն -

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ

(ստորագրություն)

Կ.Տ